

ՄՈՆՂՈՒԹԱԹԱՐԱԿԱՆ ՏԱՐՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊՈՒՄ

Գ. Բ. ՋԱՆՈՒԿՅԱՆ

Հայտնի է, որ «Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպը կազմավորվել է Սասունում հիմնականում հայ-արաբական հարաբերությունների հիմքի վրա: Վեպի այդ պատմական հիմքը կարծես թե ընդհատվում է 13-րդ դարի առաջին կեսի վերջին տասնամյակով, երբ Եգիպտոսի (Մսրա) էուբյան տիրապետության հարստությանը հաջորդում է թաթարականը, և կա այն կարծիքը, որ թաթարները «Սասնա ծռերի» մեջ «հանդես չեն գալիս»¹: ԶԺխտելով, որ մեր ժողովրդական վեպը հիմնականում կազմվել է մինչև 13-րդ դարի կեսերը, մենք կասկածելի ենք համարում թաթարական ազդեցության իսպառ բացակայության դրույթը: Մասնավորապես արաբական հարկահանությանը փոխարինած թաթարական հարկահանությունը կարող էր համապատասխան անցման հիմք ծառայել:

Այս կապակցությամբ ուշադրություն ենք հրավիրում «Սասնա ծռերի» մեջ հանդիպող հարկահավաքների անունների վրա: Բուն պատմական հարկահանների փոխարեն վեպում «հարկահանության ամբողջ դեպքը Բաղդադի խալիֆաթի կամ Մսրա Մելիքի հանձնարարությամբ ղեկավարում է Խուբաշին, Բադին, որը Կուզ, Կուդիկ, Խոզ մականուններն է կրում (Կուզբադին, Կոզբադին, Ղոզբադին, Խոզբադին, Պիրուբադին, Կոզբահդին, կուզիկ Բադիկ և այլն): Հաճախ սրան ընկերակցում են Սյուդին և Զարխադին»²:

Բադին-Կոզբադին անունը Մ. Աբեղյանը և Կ. Մելիք-Օհանջանյանը համարում են Մրվանյան հարստության հիմնադիր Բադ ամիրայի հիշատակությունը, որ 10-րդ դարի 2-րդ կեսին տիրում էր Վանա լճի արևմտյան ափի գավառներին, և որի մեջ ի մի են հավաքված «նախորդ, թերևս և հաջորդ շրջանի բոլոր հարկահանները»³:

Արդ, կարելի՞ է լիովին ապացուցված համարել, որ Բադինի անունը նույնական է Բադ ամիրայի անվան հետ: Կարող ենք ասել, որ կապ չկա մոնղոլական Բադին վիպական (էպիկական) անվան հետ, որ Բադան, Բադեն ձևերով հանդիպում է հյուսիսկովկասյան, հատկապես օսական նարտյան էպոսում, և որի մեջ հետազոտողներից Գուրիևը տեսնում է մոնղոլական ազդեցությունը. «Մոնղոլական վիպական Բադնաշար//Բադին//Բադունթայ և Խարիչի-Բաթար անունները լավ հայտնի են «Գաղտնի պատմությունների», «Ալթան Թորչիին» և այլ աղբյուրներին»⁴: Այս կապակցությամբ կարելի է երեք ենթադրություն անել. 1) Բադ ամիրայի անունը հետագայում զու-

¹ Հմմտ. «Սասնա ծռեր», Ա հատոր, ներածություն Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1936, էջ ԻԲ—22:

² Նույն տեղում, էջ ԻԳ—24:

³ Նույն տեղում:

⁴ Т. А. Гурьев, Наследие скифов и алан (глава «Монголизм в осетинском языке»). Владикавказ, 1991, с. 95.

գաղղրվել է Բաղին անվան հետ. 2) Բաղին անունը մոնղոլական է և կապ չունի Բաղ ամիրայի անվան հետ. 3) ընդհանրապես հայ. Բաղին-ի և մոնղոլական Բաղին-ի նմանությունը պատահական է:

Այս առումով էական է նշել, որ «Սասնա ծռերի» հարկահանների անունների արարական մեկնությունը դժվարությունների տեղիք է տալիս. 1) արարերենը չ հնչյուն չի ճանաչում, և Չարխաղին-ը ակնհայտորեն բուն արարական բնույթ չունի. կարելի է, իհարկե ենթադրել, որ - (խ)աղին-ը կապ ունի արար. ad-din «հավաստի...» բաղադրիչի հետ, և որ շար-ը հայկական մակդիր է, կամ շարխ-ը՝ պարսկական ծագման «անիվ» բառը, բայց ինչ-որ հիրրիդային կազմություն է ստացվում. 2) Սյուդին անունը հավանաբար քմային օձով (Südin) նույնպես արարական կերպարանք չունի, և այստեղ էլ կարելի է խոսել թաթար-մոնղոլական ազդեցության հնարավորության մասին:

Որպես ընդհանուր եզրակացություն կարելի է ասել, որ հայ ժողովրդական վեպում հնարավոր է տեսնել նաև թաթարական ազդեցություն: Այս լեզվական կովանները կան, մնում է գտնել այլ կարգի ապացույցներ:

Г. Б. ДЖАУКЯН — Монголо-татарский элемент в армянском народном эпосе.— По мнению исследователей, последние события, описываемые в армянском эпосе, относятся в основном к эпохе арабского государства и монголо-татарское влияние в нем отсутствует. Возражая, автор статьи указывает, с одной стороны, на наличие в эпосе имени Бадин, имеющего монгольское происхождение, с другой—на фонетическое оформление личных имен Чарходин и Сюдин с нехарактерными для арабского языка звуками ч и ю.